

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ, ապահովվել է մարզի կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների, զինկոմիսարիատների, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ :

Համակարգվել է ապրիլի 14-ի համապետական շաբաթօրյակի շրջանակում ՀՀ Վայոց ձորի մարզում անցկացված շաբաթօրյակի կազմակերպման աշխատանքները և համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 214-Ա որոշման համաձայն համայնքներին տրամադրվել է տեղեկատվություն 01.01.2018 թվականի դրությամբ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված քաղաքացիների տվյալների վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի թիվ 562-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված թիվ 2 հավելվածով ՀՀ մարզպետների կողմից կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացվել է տեղեկատվություն համապատասխան պետական մարմիններ:

Ընդունվել է միգրացիայի հետ խնդիր ունեցող 3 քաղաքացու դիմում՝ սահմանված կարգով տվել է ընթացք: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից ստացվել է 3 քաղաքացու դիմումի պատասխան:

Համակարգվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված աշխատանքները :

ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով աշխատանքներ են տարվել ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ :

Համակարգվել է ՀՀ Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Համակարգվել են համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները, ինչպես նաև համայնքների ղեկավարների կողմից 2017 թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունների գործընթացները:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով մարզի բոլոր համայնքներում տեղադրվել են ցուցատախտակներ, տեղեկատվությունը տեղադրվել է համայնքների պաշտոնական կայքերում, որոնց միջոցով համայնքների ազգաբնակչությունը իրազեկվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ :

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ: Համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հանդիպում համայնքի բնակչության հետ :

Համայնքներում իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել եռամսյակային և կիսայակային հաշվետվություն:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 19.01.2018 թվականի թիվ 15-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 08.05.2018 թվականի թիվ 5 որոշման պահանջների 2018 թվականի առաջին կիսամյակում իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքում: Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Համայնքային ծառայության մասին>> , <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Թափոնների մասին>>, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>>, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքների պահանջների կատարման ուղղությամբ:

Թերությունների և բացթողումների վերաբերյալ կազմվել են ակտեր, քննարկվել և սահմանվել են ժամկետներ թերությունների վերացման ուղղությամբ:

Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և տեղադրվել մարզպետարանի պաշտոնական կայքում:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի պաշտոնակատարի 11.04.2018 թվականի թիվ 01/16.1/2245-18 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի 12.04.2018 թվականի թիվ 46 կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը մարզպետի որոշման հավելվածով սահմանված ժամանակացույցին համաձայն այցելություններ է կատարել մարզի խոշորացված համայնքներ և իրականացրել է ուսումնասիրություններ հանձնարարականում նշված խնդիրների կապակցությամբ:

Աշխատանքային խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն ըստ համայնքների ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Մարզի համայնքներում համայնքային ծառայության 81 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում համալրվել է 65 պաշտոն:

2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնների թիվը 143 է:

Առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի բնակիչներից ստացվել է 19 դիմում բողոք, բոլոր դիմումներին տրվել է ընթացք սահմանված կարգով:

Վարչությունը ապահովել է մարզի ՏԻՄ-երի և մարզպետարանի աշխատակազմի փոխհարաբերությունները՝ կազմակերպել են խորհրդակցություններ, ապահովվել է մարզխորհրդի նիստերին ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ծառայությունների մասնակցությունը:

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ : Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները :

Առաջին կիսամյակի ընթացքում ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության կողմից սահմանված կարգով ընթացք է տրվել թվով 752 հանձնարարականի:

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն

25.07.2018թ.